




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԻՍՏԵՐԻ

ՄԲԱՐԱՐԱՆ

ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ

ՄԱՐԿԱԲԱՐԱՆԻ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



4

ՀԱՍՈՒՆՆԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌՎՄ



1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցամսեայի բաժանորդագիւնն է մեկ մեծիս անոնց համար որ ի Կ. Պոլիս Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաքնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրիւնու համար՝ Չորս (4) ֆրանկ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պոլիս փոխադրուի, ծաւալն ու անք, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանք վերջնականապէս պիտի ճշդուին: —

Մեկ թիւը՝ մեկ դահեկան է:

2. Արձագանգը կը հրատարակուի Եաքաք օրերը:

3. Խոնարհութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ ճոյնութեամբ հրատարակելու իրեն զրկուած ո՛ր եւ յօդուած:

4. Մտնուող յօդուածոց պատասխանատուութիւնը սակարկութիւն կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը զրկուին ուղղակի խելագորութեան:

6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

7. Ծանուցանց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԲԱՐՅԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

Առաջին Տարի

15 Յուլիս 1911

Թիւ 4.

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԱՄԵՆԱՍՏԻՐԻ ՀԱՂԱՐԴՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՏՐԻՏ



Ցաւոց անկողնոյն վրայ քրիստոնէաբար համակերպած, տեսանելի աշխարհէս քեցելով բաղձանքներու և յոյսերու ամենանուրբ թելերն իսկ, կատարելապէս երկնաւոր տեսլեանց անձնատուր, վերջին ճիգով մը ձեռնամած՝ յաւիտենականութեան սեմերուն առջև հոգեզմայլ և սիրազեղ՝ կ'ընդունէր իւր Փրկիչն Յիսուսը, և քաղցր գիրկընդխառնումով, խաղաղ հոգեվարքով կը չուէր յարքայութիւն, անցեալ տարի, 20 յունիս, օրիորդն Թամիզիէ, ի Թուր քաղաք Գաղղիոյ: Այս խոնարհ աղջիկն է զոր Տէրն գործիք առաւ իւր մեծամեծ հրաշալիաց: Դիտելի է որ վերջին զարուս ջերմեանդական երկնաձիր յայտնութիւններն կատարուած են տկար էակներու, կոյսերու միջոցաւ, և այն ի Գաղղիա. կարծես աստուածային ի-

մաստութիւնը կ'ուզէ այսպէսով խոնարհեցնել մարդկային մտքի անզուսպ ամբարտաւանութիւնը, որ մինչ ահագին հանճարներ ի զուր կ'ոգորին սուրբ Կրօնքի դէմ, ջախջախ եղեգի նման արարածներ՝ իրենց մեղմ ու դաշն ձայնով ժողովուրդներ կը խլրտեցնեն, աշխարհներ կը շարժեն, ազգեր կը բարոյականացնեն կ'ազնուացնեն ու կը տանին առ Աստուած. « Զօրութիւն իմ ի տկարութեան կատարի » . « Տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ » . « Ղտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած . և զսլնչան, զի գէան իմն խափանեացէ » (Բ. Կոր. ԺԲ. 9. — Ա. Կոր. Ա. 25, 27, 28) : Ի բաց առնելով նոյն իսկ Օրլէանի հրաշալի Օրիորդը՝ զԺան Տ'Արք, զարմանալի չէ՞ միթէ տեսնել Մարկրիթ Ալագօգ մը որ Ս. Սրտին Յիսուսի ջերմեռանդութիւնը իրրեւ բարասան մխիթարութեան կը ներկայացնէ վաստակաբեկ մարդկութեան . Պէրնատէթ տգէտ գեղջկուհին, որ Լուրտի անմատչելի կիրճերուն մէջ կը ստեղծէ փառաց նոր աշխարհ մը, ուր անվերջ երթեւեկութեամբ կը վազեն ազգեր, Տիրամօր մայրական գթութեան յաղերս՝ հոգւոյ և մարմնոյ ստաւապանաց համար. և աննշան օրիորդ մը, Թամիզիէ, կը ստեղծէ Ս. Հաղորդութեան Համաժողովները, որք զամ քան զգամ արքայավայել մեծվայելութիւն մը կը զգնուեն՝ ժողովրդոց ելեւելով : Նա ծնած ի 1834, կարծես նախաաւանումած էր Ս. Խորհրդոյն ջերմեռանդութեան համար. երկնաւորաց իսկ նախանձելի սիրով կատարեց առաջին Հաղորդութիւնը. ապա շարունակեց մի և նոյն արժարժուն եռանդը, հաղորդուելով ամէն օր մինչև իւր մահը : Քրիստոնէական նախկին դարերու տիկնայց առ Յիսուս Քրիստոս ունեցած հաւատքին և սիրոյն նախանձախնդիր, իր ամբողջ գոյութիւնը բոլորանուէր մատուց Ս. խորհրդոյն Գոհութեան անվերջ փառարանութեանը, ինքն մնալով խոնարհ և առանձնակից : Քսան և հինգ տարեկան էր երբ հոգեւոր հայր ունեցաւ զՀ. Էյմար որ Ս. Խորհրդոյ կրօնաւորական Կարգերը հաստատեց, որ կ'ուզէր ի Ս. Հաղորդութեան միշտ ներկայ եղող Յիսուսի կանգնել պարտ մը՝ հաւատացեալ հոգւոց պատուական քարերովը . զնեւ Անոր գահ մը՝ սիրայրեաց սրտերու մեղեմիկ ու կարկեհաններով . կարգել Անոր թիկնապահներ և արքունիք մը՝ միշտ արթուն, միշտ հսկող, գիշեր ու ցերեկ ի ծառաւ յութեան : Օրիորդ Թամիզիէ անձնանուէր զօհեւ հոգիները, իրրեւ ի կենդրոն . — քանզի անոնք միեւնոյն երանական կերակուրը կ'ուտեն և երկնաւոր գինին կը խմեն, Աստուածօրդոյն Մարմինն ու Արիւնը, և Անոր կեանքովը կ'ապրին . նոր ընտանիքներ, նոր ժողովուրդներ պատրաստել :

նաւոր կոնգրակ մը . և ամին տարի զօրանալով ստուարանալով , առաւ
առատ պտղաբերեցին , անագին համեմատութիւններու հաւան՝ ի Լիէժ ,
Փրիպուրկ , Նամիւր , Բարիգ , Երուսաղեմ , Լոնտրա , Գոլոնեսա , Գանատա ,
և այս տարի ի Մատրիտ , ուր Եւրոպացի բեմբասաց մը գուշակեց թէ՝
« Հոլանտա և Իրլանտա կը սպասեն զձեզ իրենց կարգին , ո՛վ Տեարք ,
Պօլիս անշուշտ , Աւստրիա անտարակոյս , — և Աւստրալիա իսկ . և կը
կոչեն զձեզ » :

Այսպէս ահա տկար կին մը կոչեց ազգերը , և ազգերն փութացին
չքեզ հանգիստաւորութեամբ ի Ս . Խորհրդեան ծածկուած Թագաւորին
առջև մշտնջենապէս երկրպագելու . այն Թագաւորին որ կուգար հեղ և
խոնարհ . որ պիտի Թագաւորէ յաւեոտեանս և ևս . որ իր Հօրմէն զրուե-
ցաւ Թագաւոր ի վերայ Սիոնի , և տրուեցաւ իրեն ամէն իշխանութիւն
յերկինս և յերկրի . որ իր մահուամբը եղաւ « Թագաւոր Թագաւորաց և
Տէր տէրանց » (Յայտ . ԺԹ . 16.) : Այլ մասնաւոր եղանակաւ՝ որովհետեւ
մարդիկներուն տուաւ կենաց հացը . « Ստացի՛ր զմեզ փոխանակ հացի »
(Ծնն . իսկ . 19.) :

Ահա Ս . Հաղորդութեան Համաժողովոյ նշանակութիւնը : Եւ որով-
հետեւ այս տարուան Համաժողովն՝ ի Սպանիա , բացառիկ ու աննման
չքեղութեամբ և մեծափառ հանդիսիւ կատարուեցաւ , ուր նաեւ մասնաւոր-
պատուոյ տեղ մը զբաւած էր մեր սիրելի և մեծարելի Հովուապետը ,
առանձին խնամով անոր մանրամասնութիւնները պիտի զետեղենք հետ-
զհետէ Արձապանգիս մէջ , հետեւելով մեր Ամենապ . Կաթողիկոսին քայլե-
րուն , ի հոգեւորական շինութիւն և ի մխիթարութիւն մերազնեայցս :

Երեքշաբթի 20 Յունիս երեկոյեան ժամը 7 ու կէսին ճեպընթաց Կա-
ռախումբով մեկնեցաւ Բարիզէն դէպ ի Մատրիտ՝ Ամենապատիւ Հոգեւոր
Տէրն՝ հետն ունենալով իւր քարտուղարն՝ Գեր Յովսէփ Վ . Ճամճեան : Եր-
կրորդ օրն՝ Յունիս 21 , առաւօտուն՝ Սպանիոյ սահմանագլուխը փոխա-
դրուելով ի սպանիական կառախումբ , մեկնեցան 8 ու կէսին և հասան
ի Մատրիտ՝ գեշերը , 11 ու կէսին : Գիշերուան այս յառաջացեալ ժամուն ,
մայթի վրայ կեցած էին զիմաւորելու փութացողներու բազմութիւն մը .
նախապէս որոշուած արարողական կարգաւորութեամբ . — Մատրիտի
Եպիսկոպոսն՝ Արհի , Եղէ Մարիա Սալվաթօր ի Պարրէրա՝ հագած մա-

նուշակագոյն զգեստներ և ծխական մեծ Լօդիկը, ողջագութեցաւ Հոգեւոր Տիրոջ հետ. հետն ունէր նաև իւր Փոխանորդն՝ Մօնս. Ֆրանսիոյ Վալէս Ֆայիլտէ. և բազմաթիւ Կոմսեր, Մարքիզներ, պաշտօնական այցելութեանց զգեստներն հագած, բարձր գլխարկով և ձեռնոց ի ձեռին: Բարի գալատեան խօսքերն փոխանակուելէ վերջ, յամրագնաց յառաջացան դէպ ի Կայարանին հէքը, ուր կը սպասէր խառն բազմութիւն, զորս օրհնելով Ամեն. Կաթողիկոս, իշխանական կառքի մը մէջ բազմեցան և գնացին Եպիսկոպոսական մեծ պալատը, ուր նոր Հիւրին համար արդէն խնամով պատրաստուած էր մամուռը յարկարածին մը:

Երկրորդ օր, ՉՉ Յունիս, Ամենապ. Տէր իր Քարտուղարին հետ Կայցելէր Քահանայապետական Դեսպան (Nunzio) Մօնս. Անթ. Վիքոյ Արք.ին, ինչպէս նաև Թագաւորին հօրաքոյր՝ Ն. Բ. Ինֆանթա Իզապէլլայի, որ պատուոյ Նախագահն է Համաժողովին: Ամենապ. Այցելուն Ինֆանթայի մեծ պալատան մէջ իշխանական պատիւներով և արարողութեամբ ընդունուեցաւ մեծ դռնէն և առաջնորդուեցաւ ի սրահ. շատ սիրալիր եղաւ իշխանուհոյն ընդունելութիւնը. գաղղիերէն կը խօսի շատ դիւրութեամբ. իւր մեծ գոհունակութիւնը յայտնեց որ Հայ Ուղղափառներու Կ.— Պատրիարքը հաճեցաւ պատուել զՍպանիա իւր ներկայութեամբ: Եւ իր «պատուական և աստուածարեալ Այցելուն » հաճոյք մը պատճառած ըլլալու համար, կը պտտոցնէ զիրենք պալատան ամէն կողմը ուր յիրաւի չքեղօրէն կը փայլին զարդեր, նկարներ, թանկագին կահեր: Գրեթէ կէսօր էր, երբ մականցան դէպ յեպիսկոպոսարան, ուր հիւրամեծալութիւնը — ըսինք միանգամ ընդ միշտ, պարզ սպէս իշխանավայել եղաւ ցորչափ օթեվանեցան: Մատրիտի Եպիսկոպոսը ագնիւ, յարգելի և համակրելի անձնաւորութիւն մըն է. գաղղիերէնով կրնայ զինքն հասկցնել. մեծապէս խնամոտ, փութկանկատ, յարգադիր է. իւր մարդիկ ակնարկի կը սպասեն, այնքան կազմ և պատրաստ են ի ծառայութիւն. որքան ալ սրտաբուլիս են թէև Նորին Գրեհր-Նանկութեան ջնորհակալիքն՝ այնքան ազնուութեան հանդէպ, բայց և անպէս իր զգացմանց անճիշդ թարգման են իր խօսքերը...:

Յետ միջօրէի Ամենապ. Տէրն գնաց յայցելութիւն Վիւմ. Օսմանեան Դեսպանին, որ քաղքէն բացակայ գտնուելով, այցելոտն մը ձգուեցաւ: — Դիտելի է որ Կոմսուհի մը Կաթողիկոսին տրամադրութեան տակ դրած էր՝ ցորչափ մնաց ի Մատրիտ, փառաւոր ինքնաշարժ կառք (automobile) մը: — Նոյն օրը՝ ժամը 6 ին, նոյն կառքին մէջ բազմած, պտոյտ մը կատարեցին Թագաւորի պալատան տնտառին մէջ, ուր թաւաւտ սողարթներու մէջ կը

թաշտին գեղատեսիլ երփնիկ փառիաններու երամներ և ամէն կողմ կ'ուտնտնեն կը սուրան նապաստաններու ջրլիրներ և այլ երէ վայրի:

(Շարունակելի)

ԱՅՈՒՆ ԵՒ ԱՅՈՒՆ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆՔ

Հոռվիմ


Յունիս ամսոյն 28, ՍՍ. Պետրոս և Պողոս Առաքելոց միծանդէս Տօնախմբութեան նախատօնակ երեկոյին Սրբ. Քահանայապետն իջաւ ի Մայր Տաճարն Սրբոյն Պետրոսի, և հոն կէս ժամու չափ ողօթեց:

Նոյն երեկոյ պատիւն շունեցանք Նորին Երանութեան ներկայացընելու մեր փառակազմ շարաթաթերթն, թարգմանութեամբ Ջօնին և բովանդակութեան խտալերէն համառօտութեամբ՝ ամբողջը գեղարուեստօրէն տպագրեալ: Ն. Ե. հաճեցաւ յայտնել իւր բարձր գոհունակութիւնը:

Անգղիոյ Գէորգ Ե. Թագաւորին թագադրութեան հանդէսին Քահանայապետական ներկայացուցիչն՝ Արք. Կրանիթօ տի Պէլօնթէ արտաքոյ կարօ գի պատիւներով ընդունուած է. արքայական հրամանատար Ծօրպա իրեն հիւրամեծար կարգուած. պալատան երկու կառքեր իր տրամադրութեան տակ դրուած, և ինք իջեվաներ է Նօթֆօլքի Դուքսին տպարանքը, որոյ առջև պահանորդ դրուած էին թագաւորի թիկնապահներ: Ն. Բ. Գօննօթի Դուքս գիմաւորեց զինքը, և արտ. գործոց նախարար Լօրտ Կրէյքին առաջնորդութեամբ թագաւորէն և թագուհիէն ամենասիրալիր եղանակաւ ընդունուեցաւ Պուքլինկեամ Բալէսի Քահարապետին մէջ, ուր Քահանայապետին բարեմաղթութիւնները և համակրական զգացումները ներկայացուց Նոյին Վեհափառութեան. և յանձնեց Ս. Պապին ինքնագիր նամակը: Թագաւորը շատ ազգուած կերպով շնորհակալութիւններ մատոյց: Պաշտօնական ընդունելութեանց մէջ օտար Պետութեանց և Գերդաստանաց ներկայացուցիչ 200 էն աւելի իշխաններուն կը յառաջէր: Ուէսթմինսթրի կաթողիկէ Մայր եկեղեցւոյն մէջ հանգիստաւոր Զայնաւոր Պատարագ մը մատոյց ի ներկայութեան Եպիսկոպոսաց և ազնուական Սւազանեոյ: Թագաւորէն առած

հրաժեշտն ալ շատ սիրալիր եղաւ : Թագաւորին հայրը՝ Եղուարդ Է. երգման ձևին մէջէն կաթողիկէութիւնը վիրաւորող մասը վերցնել տուած էր . այս բարեփոխեալ ձևին վրայ երգում ըրաւ նաև Գէորգ Ե. : Անգղիոյ կաթողիկոսը մեծ ցնծութեամբ համակեցան :

Երկու մեծ սուգեր հարուածեցին Սալոնայի Տունը : Մինչդեռ Վիկտոր Էմմանուէլի յիշատակին նուիրուած և քառասուն միլիոնէ աւելի արժած և 32 տարիներէ ի վեր շինուող և դեռ 10 տարի շինուելիք չքնաղ և հրաշակերտ յիշատակարանին բացումը կը կատարէր Խալիա ի Հոռմ, անդին ի Թորինոյ 25 Յունիս, Վիքտոր Էմմանուէլի գումար և իշխան Հեր. Նաբոլէոնի կողակից ազնիւ, առաքինի, աղքատասէր և բազմաչարչար իշխանուհին Գլօթիլտէ տի Սալոնա՝ ամենայն համակերպութեամբ ի կամս Աստուծոյ և ընդունելով Եկեղեցւոյ խորհուրդներն ու Քահանայապետական Օրհնութիւնը, իւր սուրբ հոգին կը յանձնէր ի ձեռս Արարչին՝ ի սուգ թաղելով արքայական Տունն և զիտալիա : Ծնած էր ի 1843 : Ահա սակայն երկրորդ սուգ մի ևս . միւսնայն առաքինութիւններով զարդարուած և աշխարհիս ամենամեծ ազէտները տեսած, բոյց միշտ խոնարհաբար համակերպած՝ թագուհի Մարիա Բիա, ծն. ի 1847, և Բորթուգալի թագաւոր Լուդովիկոսի լծակից, ամսոյս 5 ին իւր սրբանեալ հոգին կ'աւանդէր տա Առջ տուած, նոյնպէս ամէն հոգեւոր մխիթարութիւններով կազդուրուած : Դեռ ամէն մարդ կը յիշէ ո՛րպիսի խուժուժ ոպանման զոհ գնաց իւր որդին՝ Գարլսա թագաւորն, և իւր ազնիւ դեռարոյս թոռը . անասան արիւն թեամբ տոկաց դառնակիւծ ցաւին : Իսկ վերջերս, երբ յեղափոխական ահեղ բամբուռներու մէջ իւր միւս թոռն Մանուէլ թագաւոր գահագուրկ կ'ըլլար, և ամբողջ արքունի գերդաստանն գիշերուան աղջամուղջին մէջ խուճապի մատնուած՝ փախստական կ'իյնար օտար երկիրներ, համակերպեցաւ վշտակիւր բամբուռը . և թէպէտ ո՛չ առաքինութիւնը՝ այլ խորտակեցաւ զեղեկոտ առողջութիւնը՝ որ վրեթէ կատարելապէս ինկաւ երբ քանի մը օր առաջ իւր սիրոյ թեւերուն մէջ վերջին շունչը ժողովեց տարփալի իւր քրիչ՝ Գլօթիլտէի . . . այլ ևս աշխարհ մութ դարձած էր իրեն համար :



ԹԵՄԵՐՈՒ ԶԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

1. Ամենապ. Հոգևոր Տէրը Եպիսկոպոսէ մը կ'ընդունի հետեւեալը.
« Տա՛յր Երկինք որ տառապեալ ազգիս մէջէն ի սպառ վերանային նորամուտ և հակակրօն գաղափարներն, և քիչ մը շունչ առնոյր բազմաչարչար Նուիրապետութիւնս խաղաղութեամբ աշխատելու համար ի փրկութիւն հոգւոց հաւատացելոց: Իսկ ազգային կանոնադրի մասին, կը դատապարտեմ զոր կը դատապարտէ Հռովմ. կ'ընդունիմ զոր կ'ընդունի և կը վաւերացնէ Հռովմէական Եկեղեցին. զօտարի զհետ ո՛չ երթամք, զի ոչ ճանաչեմք զձայն օտարաց: Նոյն սկզբունքը քարոզեցի ժողովրդեանս և յուսամ թէ այսպիսի խնդիրներու մէջ չպիտի միջամտեն: Նաև բոլոր կղերս Նուիրապետութեան հետ են: Ժողովուրդը տրամադիր է չմիջամտելու և կամ չխաբուելու լրագիրներու գրգռիչ գրութիւններէն. Մենք միայն ախարքը երեք ամիսէ ի վեր արդէն դադրեցուցած եմ »:

« Անցեալ տարի արդէն կանոնադրի առժամեայ քննութեան ատեն յայտնի կերպով յանձնաժողովին զրուցած եմ՝ որ, բովանդակ այն ծրագիրը ընկերվարականութեան սկզբունքներ կը հօտի. և թէ կը նմանի ոսկեզօծ դեղահաս ներու որոց վախճանը թունաւորում է. նաև Ձեր Սրբութեան իսկ յայտնած էի: Յուսամք թէ յաջողութեամբ Ձեր բարի բարի զիտաւորութիւններն կը պատկուին »:

2. Բողոք

Պիլէձիք 24 Յունիս 1911

Ամենապատիւ Գերերջանիկ Հոգևոր Տէրն մեր, Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան. Կաթողիկոս և Պատրիարք Տանն Կիլիկիոյ, հպատակելով և հնազանդելով Ս. Ժողովոյ և Հռովմայ Սրբազան Քահանայապետին թերադրութեան և հրամանաց, դատապարտած է և կը դատապարտէ, ազգային այն նոր կանոնադրութեան ծրագիրը՝ որ ազգային երեսփոխանական ըսուած ժողովը սկսած է ծրագրել: Եւ կը ցրուէ նոյն ժողովը՝ նմանապէս Հռովմայ Ս. Քահանայապետին և Ս. Ժողովոյ ականակութեամբ:

Արդ՝ Հռովմայ Ս. Քահանայապետին և Ս. Ժողովին հնազանդող Կ.

Պատրիարքի մը դէմ Կ. Պատրիարքարանի մէջ երեսփոխանական ժողով գումարել և նոր կանոնագրի ծրագիրները շարունակել. Հռովմայ և օրինաւորապէս Հռովմէ ճանչցուած Կաթողիկոս Պատրիարքի դէմ ապստամբութիւն. և Ազգային իրաւանց փճացում ըլլալով, կը բողոքեմ ձեռներէցներու դէմ իբրեւ Կաթողիկէ անհատ մը. և իբրեւ Կղերական, և իբրեւ ժողովրդապետ:

Կը բողոքեմ գարձեալ անոնց դէմ որ փոխանակ օրինաւոր Հովուին կոնդակներն ու Հովուականները տարածելու, Անոր հակառակ և նախատաւան յօդուածներ ու գրութիւններ կը հրատարակեն: Խնդրոյն ծանրութիւնը քողարկելով, միամիտները կ'ուզեն համոզել թէ Լևոն ԺԳ. և Պիոս Ժ. Ս. Քահանայապետներու, Սիմէոնի և Կօղզի Կարդինալներու անձնական առաւելութեանց խնդիր է. և վարելակերպ գիտնալու կամ չգիտնալու արդիւնք:

Ժողով նոր կանոնագրի և երեսփոխանական ըստած ժողովոյն ընտրութեան և քուէարկութեանց և Արհի. Սիւնհոգոսական Հարց վրայ բանեցուցած բռնական ազդեցութեան կամ բարոյական բռնութեան մասին, արդէն ծանօթ եղելութեանց՝ Կաթողիկէ հոգւոյն հակառակ և հակակղերական գրութեան հետեղութիւնը պարսաւել ու եպերել, կը բողոքեմք Ազգային իրաւանց անուամբ գրուած ու գործուած ամեն տեսակ հակակղերական շարժմանց դէմ, և եկեղեցական գործոց աշխարհականներու միջամտութեան դէմ, սպասելով որ օր մը առաջ Պատրիարքութենէ զատ՝ աշխարհականաց համար պաշտօնէութիւն մի հաստատուելով, այլ ևս աշխարհական - Ազգային գործոց պատրուակաւ Եկեղեցականներու և Եկեղեցական գործերու աշխարհականք չմիջամտեն. այլ զուտ Քաղաքական գործերով զբաղին, և Ազգին այլ և այլ յարանուանութեանց ու այլ և այլ ազգաց հետ ունեցած զինուորական և նման գործերը հագան ու կարգադրին: Եկեղեցւոյ Ազատութեան Դատին համար Ս. Քահանայապետը կրեցին ու կը կրեն աքսորը և բանտ. պատրաստ ըլլանք և մենք առ այդ:

Գրիգոր Ծ, Վ. Աշրգեան

Կ. Պ. Փ. Կ. Պիլեմիկի

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

1. Կաթողիկեայ ժողովուրդը այժր բանալու է:

Մեծմուսի Ախպար Ամեն . և Գեր . Կաթողիկոսի Ա . հովուական թուղթը իր սնով ֆինանդատելով 4881 թուոյն մէջ կ'ըսէ . «մէսէլէնին ասըլ ճանն եէրի իշթէ պուրաւը տըր . ճէմաւթըն նիզամնամէ եափմայա , մէճլիլէր թէշ-քիլ էթմէեէ հագգը վա՛ր մը , եօ՞գ մը » — Այս հարցման կը պատասխանենք որոշ ու քիչ բառերով .

1. Հարկաւ Մէճմուսի Ախպարի միտքն է կաթողիկէ ժողովրդեան վրայ խօսիլ և կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ , հետեւաբար իր հարցումն կամ խնդիրն այս ըլլալու է . « Կաթողիկէ ժողովուրդը կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ մնալով իրաւունք ունի՞ կանոնագիր շարագրելու և ժողովներ գումարելու » , որ ըսել է՝ կաթողիկէ ժողովուրդը կաթողիկէ Եկեղեցւոյն սկզբանց ու վարդապետութեան համաձայն՝ օրհնադիր և վարիչ ըլլալու ձեռնհասութիւն ունի :

2. Մեր Ամենապատիւ Հեզեօր Տէրն՝ Եկեղեցւոյ աստուածաշէն կազմութեան անփոփոխելի սկզբանց , Ս . Հարց վարդապետութեան , Տիեզերական ժողովներու և Ս . Քահանայապետներու վճիռներուն յենլով , ամենայն իրաւամբ և անվիճելի ճշտութեամբ կը բացատրէ այս մասին Եկեղեցւոյ վարդապետութիւնը , թէ այսինքն « կաթողիկէ ժողովուրդը կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ մնալով իրաւունք և հետեւաբար ձեռնհասութիւն չունի օրհնադիր ու վարիչ ըլլալու » , ուստի չի կրնար ո՛չ կանոնագիր յօրինել ո՛չ ալ ժողովներ գումարել ինքնիշխանօրէն :


3. Եթէ կանոնագիր շարագրել , ժողովներ գումարել կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ ներքալ չէ ժողովրդեան ամէն պարագայի , զայնք ընել և շարունակել հակառակ կարգաւոր իշխանութեան բացարձակ , մեկին ու որոշ արգելքին և դատապարտութեան՝ յայտնապէս հերձուածողական է և կարելի չէ արդարացնել Կաթողիկէ Եկեղեցւոյ սկզբունքներով :

4. Այս այսպէս ըլլալով՝ հարցում մը մենք կ'ուղղենք Մէճմուսի Ախպարի . երբ թերթ մը կաթողիկէ հասարակութեան մը կարգաւոր Պետին դէմ կը կանգնի և կը պարսաւէ , կը դատապարտէ անոր կաթողիկէաշունչ ու ըստ ամենայնի Եկեղեցւոյ վարդապետութեան վրայ հիմնուած կարգադրութիւններն , երբ կը համարձակի բացէն տպատամբութեան հրաւիրելու

Եկեղեցական կարգաւոր իշխանութեան դէմ կաթողիկէ կղերն ու հասարակութիւնը, երբ կը յաւակնի գրգռել ժողովուրդն որ նոյն կարգաւոր եկեղեցական Հովուին զժողովուրդն ուսուցանելու աստուածատուր իշխանութիւնը կապտէ, և լռել տայ նոյնիսկ Եկեղեցւոյ մէջ՝ թոյլ չտալով որ կարգացուի Հովուական թուղթ մը. երբ վերջապէս ոչ միայն ազատ կը կարծէ զինքն հնազանդելէ Եկեղեցւոյ օրինաւոր իշխանութեան, այլ նաև զայն հրապարակաւ նախատելէ և այսպնեղէ չակնածիր. այսպիսի թերթ մը կրնայ՝ կաթողիկէայ նկատուիլ ...

Մենք առանց վարանելու կը պատասխանենք ո՛չ. և հետևաբար այդպիսի թերթ մը ոչ — կաթողիկէայ թերթերու կարգը դասելու է:

Այս մասին կաթողիկէայ ժողովուրդը աչքը բանալու է:




ՆՈՐ ԵՐԱԳԻՐԻ ՅՕԴՈՒԱԾԻ ՄԸ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ


Նոր ծրագիր կոչուած գրութեան Երեսփոխանական ըսուած ժողովոյ կողմանէ կատարուած քննութեանը թէև ո՛չ մէկ տեսակէտով պիտի չուզէինք ակնարկել, սակայն պարզամիտները խաբելու ձև առած պարագայից մէկ հատը միայն մատնանը չել հարկ կը դատեմք, իբրև թէ Գլ. ԻԱ. Ը՝ որ կը խօսի նորաստեղծ Պատուիրակութեան վրայ (յօդ. 163-168), « ջնջուեր է »: Այնքան ճշդուած, կշռուած, մանրամասնուած, պատճառաբանուած գլուխ մը, գրչի հարուածով մը ինչպէս կըցան ջնջել, եթէ եկեղեցական իշխանութեան վերջին դօրաւոր տրամադրութիւնները չըլլային, բնաւ չէին ջնջեր, ինչպէս որ նախապէս եղած այնքան զիտողութեանց զիմադրեցին և քացայտօրէն եկեղի. Կանոնաց հակառակ յօդուածները պահեցին Սակայն այդ ծրագիրը ասանկ մէկ երկու գլուխ ջնջելով չմաքրուիր. հոն գլխէ գլուխ կանխամտածուած և ՍԻՍԹԷՄԱԹԻՔ զապափար մը կը շարունակուի կաթիլ կաթիլ սողոսկող ջուրի պէս. ուսումնասիրուած և կաթողիկէ ոգւոյ հակընդդէմ ԱՇԽԱՐՀԱԳԱՆՅՈՒՄ մը: Անոր համար է որ իրենց այժմեան պարագայից մէջ մաքրել նկրտած ծրագիրը նշանակութիւն չունի, թէև այսպէս մաքրուելով ևս լի է վրիպանօք. այլ առաջին անգամ տպուածն է որ իբր ի հայելոյ անապարտ կը պատկերացնէ՝ իրենց դէմ եղեալ կէտ նպատակին, իրենց գաղափարականը, իրենց կաթողիկէ Եկեղեցւոյ կանոնաց ի հեճուկս աշխարհականացնելու Ո՞րին. և անալմենք այն ծրագիրն է որ իբրև իրենց մտաւորական համոզմանց ճշգրիտ և անսայթաք թարգման կ'ընդունինք և կ'արձանագրենք, իրենց ապաժամ և անբաւարար հաստատութիւններէն կամ սրբագրութիւններէն չխաբուելու համար, Բայց երանի՜ թէ գործուած այս ջնջումներն ու սրբագրութիւններն ալ գոնէ ուղղահետութեամբ կատարուած ըլլային. — Բնաւ ամենևին ո՛չ. իրենց սեւեռեալ գա-

պարարը սեղմած, կծկած են ինչպէս ձգախէժ (լասթիկ) կամ իրը զտնալճիւթ. վեր-
ցուցեր են ան երկար բարակ գայթակղառիթ մանրամասնութիւնները. և պահեր են
երկու բառ՝ թէ, ի պահանջել հարկին վարչ, ժողովը պիտի կարենայ պատուիրակ ղըր-
կել. և այս երկու բառի մէջ, մի և նոյն զօրութեամբ և անորոշութեամբ համար իսկ
աւելի ուժգնութեամբ պահպանած են այն ամբողջ գլուխը. ջնջած են՝ պարզամիտները
խարելու համար, պահած են՝ տեղի չտալու համար Գանդի վարչ. ժողովոյ այդ ա-
պօրինի և ինքնաստեղծ իրաւասութիւնը կը պահպանեն — ահա՛ « մոլորութիւնը ». և
« պատուիրակ » կ'անուանեն ինչ իմաստով. իրենք են « մեկնելու » դատաւորները (յօդ.
72. Ժ.). ինչպէս՝ պիտի մեկնեն. հարկաւ առ երկ ոյթս ջնջուած մանրամասնութեանց
համաձայն. — « ի պահանջել հարկին », կ'ըսեն. այս հարկին դատաւորներն ալ « իրենք »
են, այսինքն՝ « երբ որ ուզելու ըլլան »: Տեսէք ուրեմն թէ ինչպէս ջնջած և ինչպէս
քանի մը բառերու մէջ պահպանած են ամբողջ մոլորութեան գլուխ մը. իրենք պիտի
ըսեն՝ վարպետութիւն և խորամանկութիւն. մենք պիտի ըսենք խարդախութիւն
և չարամանկութիւն. և յոյս ունինք որ անկեղծօրէն կաթողիկեայ եղողներ պիտի ան-
դրադառնան ու պիտի չխաբուին:

Մէնմուտի մէջ յօդուածներ տուող ծանօթ դէմքը՝ Պատմաբանը, կ'երևի թէ
առիթէն օգտուելով կ'ուզէ դիտումնաւոր և անճիշտ կերպով քշել իր հին գաղափար-
ները, գիտնալով մանաւանդ որ անոնք գրգռութիւնները ո'չ թէ պիտի յածուցանեն,
այլ աւելի ևս պիտի արծարծեն լաւ ևս չէ՞ր ըլլար մի'թէ՝ որ, եթէ ոչ ազգին հան-
դարտութեան՝ գոնէ՝ իր առողջութեան հոգ տանէր, որուն այնքան պէտք ունի...



Փ. Պիսնի
Տնօրէն Պատասխանատու



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հանձնողով Ամենատուրք Հաղորդութեան ի Մասրիս	հշ 35
Այլ եւ այլ Տեղեկագրական	» 40
Թեւեռու Չայնակցութիւն Կարողիկոսական Տրանսլորութեանց	» 42
Այլ եւ այլ	» 44